



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ**

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ներածություն.....	3
II. Ամփոփագիր.....	5
III. Քարոզչությունը սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում.....	9
IV. Չանգվածային լրատվության միջոցների գործունեությունը և տեղեկատվության ազատության ապահովումը.....	13
V. Ընտրացուցակների անճշտությունների և դիտորդական առաքելության ընթացքում իրավունքների ապահովման խնդիրները.....	19
VI. Հանրաքվեի գործընթացի հետ կապված Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված հաղորդումները և դրանց կապակցությամբ քննության իրականացումը.....	23
VII. Եզրահանգում.....	32

I. Ներածություն

Հանրաքվեն երկրի իրավական կյանքում ունի կարևորագույն նշանակություն: Այն քաղաքացիներին հնարավորություն է տալիս իրենց կամքի անմիջական արտահայտմամբ իրականացվող քվեարկության միջոցով որոշումներ ընդունել երկրի պետական կամ հասարակական կյանքի այս կամ այն հարցի վերաբերյալ: Ըստ այդ, հանրաքվեն արդարացիորեն համարվում է անմիջական ժողովրդաիշխանության բարձրագրույն ձև: Հանրաքվեի տեսակների թվում առավել կարևոր նշանակություն ունի սահմանադրական հանրաքվեն, որի միջոցով երկրի քաղաքացիներն արտահայտում են իրենց դիրքորոշումը մայր օրենքի կամ դրանում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ: Այստեղ է, որ իրացվում է ընտելու կամ ընտրվելու քաղաքացու կարևորագույն քաղաքական իրավունքը:

Սա է պատճառը, որ հանրաքվեն և, ընդհանրապես, ընտրական գործընթացները գտնվում և պետք է շարունակեն գտնվել հասարակական պատշաճ վերահսկողության ներքո: Նշվածի հետ կապված, ցանկացած իրավախախտում պետք է անհապաղ արձագանք ստանան պետության իրավասու մարմինների կողմից: Այս տեսակի իրավախախտումներն ունեն հանրային վտանգավորության առավել բարձր աստիճան, քանի որ կարող են կասկածի տակ դնել այդ գործընթացն ընդհանրապես: Դրանք նաև ունակ են սպառնալիքի տակ դնելու պետության հեղինակությունը ժողովրդավարության և դրանով պայմանավորված՝ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում: Ուստի, այս ոլորտում պետությունները պետք է իրականացնեն առավել խիստ ու նպատակաուղղված քաղաքականություն՝ նպատակ ունենալով առավելագույնս ապահովել պատասխանատվության անխուսափելիության և կանխարգելիչ նպատակ հետապնդող արդյունավետ պատժողական քաղաքականության սկզբունքների լիարժեք իրացումը:

2015 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում նախաձեռնվեցին ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, որոնք թվով երրորդն էին Հայաստանի Հանրապետության իրավական պատմության մեջ: Արդյունքում՝ 2015

թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած հանրաքվեով ՀՀ Սահմանադրության մեջ կատարվեցին զգալի թվով փոփոխություններ:

Ընտրությունների կամ հանրաքվեների անցակցման հետ կապված հարցերը գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ նաև Պաշտպան) ուշադրության ներքո, քանի որ նախևառաջ սերտորեն առնչվում են անձի քաղաքական իրավունքների իրացման հետ: Այդ հարցերը Պաշտպանի ուշադրության ներքո գտնվում են նաև այն պատճառով, որ անմիջականորեն կապված են նաև անձի այլ հիմնարար իրավունքների իրացման հետ (խոսքն, օրինակ, վերաբերում է տեղեկատվության ազատությանը, ազատ տեղաշարժի իրավունքին, մասնավոր կյանքի անձոնեմխելիությանը և այլն): Ավելին, մարդու իրավունքների խախտումների վտանգն առավել մեծանում է հենց ընտրությունների կամ հանրաքվեների անցկացման ժամանակ:

II. Ամփոփագիր

2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ ՀՀ սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի օրը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ընտրատեղամասերում անմիջական դիտորդական առաքելություն չի իրականացվել. այդպիսի գործունեությունը դուրս է Մարդու իրավունքների պաշտպանի՝ օրենքով սահմանված գործառույթների շրջանակներից: Մինևույն ժամանակ, Պաշտպանի և նրա աշխատակազմի կողմից իրականացվել է քվեարկության ողջ օրվա ընթացքում գործընթացի մոնիթորինգ լրատվության միջոցների օգնությամբ: Որոշակի տեղեկություններ են ստացվել նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Դեկտեմբերի 6-ի ողջ օրվա ընթացքում գրանցվել են նաև թեժ գծին ուղղվող զանգերը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ քաղաքացիներին տրամադրվել է նաև իրավական խորհրդատվություն:

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի գործընթացը հասկանալիորեն գտնվել է ողջ հասարակության ուշադրության ներքո: Այն եղել է նաև ինչպես տեղական դիտորդական, այնպես էլ Հայաստանում ներկայացված միջազգային կազմակերպությունների ուշադրության ներքո: Այդ կազմակերպությունների կողմից էլ հետագայում հանրաքվեի գործընթացի վերաբերյալ հրապարակվել են համապատասխան գնահատականներ կամ գեկույցներ:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին՝ հանրաքվեի անցկացման օրը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակվել է ժամը 12:00-ի դրությամբ ամփոփում: Այն վերաբերում է ինչպես այդ պահի դրությամբ ընտրախախտումների վերաբերյալ ստացած ահազանգերի ու դրանց կապակցությամբ ձեռնարկված իրավական միջոցների վերաբերյալ տեղեկություններ:

Հանրաքվեի անցկացման հաջորդ օրը՝ 2015 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում հանրաքվեի գործընթացի հետ կապված հրապարակվել է «ՀԱՆՐԱՔՎԵ 2015 ԱՀԱԶԱՆԳԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ» վերտառությամբ հայտարարություն:

Համաձայն այդ հայտարարության՝ Օմբուդսմենը ընտրախախտումների վերաբերյալ ստացել է 67 ահազանգ¹: Ահազանգերի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման ծառայությունն այցելել է խնդրահարույց ընտրատեղամասեր՝ ծանոթանալու հնարավոր խախտումներին: Կատարվել է 31 այց, իսկ որոշ դեպքերում էլ հարցերին լուծում է տրվել բանավոր խորհրդատվությամբ կամ խնդիրն արձանագրվել է, եւ դրանց վերաբերյալ սկսվել է հարցի քննարկման ընթացակարգ:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի 2015 թվականի դեկտեմբերի 7-ի հրապարակային հայտարարության՝ հանրաքվեի կապակցությամբ ստացած ահազանգերը հիմնականում վերաբերել են լրագրողների, դիտորդների եւ հանձնաժողովի անդամների գործունեության խոչընդոտմանը (11 դեպք), ընտրական գործընթացի ոչ պատճաշ կազմակերպմանը (3 դեպք), ընտրացուցակներում եղած անճշտություններին եւ կրկնաքվեարկությանը (9 դեպք), տեղամասերում մարդկանց կուտակումներին (2 դեպք), քաղաքացիներին ոչ իրավաչափ բերման ենթարկելուն (7 դեպք), լցոնումներին (6 դեպք), ընտրակաշառքի բաժանմանը (2 դեպք), անձնագրերի եւ դրանց մեջ դրվող կնիքների հետ կապված խնդիրներին (7 դեպք), քվեաթերթիկների հաշվման ընթացքում առաջացած խնդիրներին, մասնավորապես՝ հաշվման գործընթացի դադարեցմանը (5 դեպք), ձայների հաշվելու ընթացքում հանձնաժողովի անդամների աշխատանքի խոչընդոտմանը (11 դեպք), քվեաթերթիկների նախնական ու վերջնական հաշվարկների անհամապատասխանությանը (4 դեպք):

Պաշտպանի աշխատակազմի միջամտության արդյունքում կարգավորվել է լրագրողների, դիտորդների եւ հանձնաժողովի անդամների գործունեության խոչընդոտման 8 դեպք, շտկվել է ընտրացուցակներում եղած 7 անճշտություն, բերման ենթարկված 7 անձանցից 3-ը ազատ են արձակվել բաժիններից, իսկ 3 դեպքով հարցին տեղում է լուծում տրվել, 2 տեղամասերում էլ կարգավորվել է ընտրական գործընթացի կազմակերպումը: Քվեաթերթիկների հաշվարկման փուլում կանխվել է հաշվարկի դադարեցման եւ հանձնաժողովի անդամների աշխատանքի խոչընդոտման

¹ Տե՛ս, <http://ombuds.am/article/1084>:

3-ական դեպք, կարգավորվել է նաեւ հաշվարկների անհամապատասխանության 4 դեպքից 3-ը: Կենսաչափական անձնագրով քվեարկել թույլ տալու դեպքի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի միջամտությունից հետո նախապատրաստվել են նյութեր, հանձնաժողովի անդամի ծեծի ենթարկելու դեպքով հաղորդում է տրվել Ոստիկանություն:

Ըստ նույն հայտարարության՝

«Առաջիկա օրերին Օմբուդսմենը հետետղականորեն կշարունակի ուսումնասիրել յուրաքանչյուր ահազանգի հիման վրա արձանագրված խախտումները՝ իրականացնելով մանրակրկիտ եւ բազամակողմանի ուսումնասիրություն: Անհրաժեշտ է, որ իրավախախտում կատարած բոլոր անձինք ենթարկվեն խստագույն պատասխանատվության:

Ամփոփելով դիտորդական կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը, ուսումնասիրելով իրավախախտումների մասին մամուլի հրապարակումներն ու առկա տեսանյութերը, ինչպես նաեւ ստանալով պետական մարմիններից փաստարկված պարզաբանումներ՝ Օմբուդսմենն առաջիկայում կներկայացնի իր ամփոփիչ գնահատականը 2015 թվականի Հանրաքվեի վերաբերյալ»²:

Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իր իրավասության սահմաններում Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի վերաբերյալ սույն զեկույցը շարադրվել է՝ հիմք ընդունելով հանրաքվեի հետ կապված Պաշտպանի պաշտոնական կայքէջում առկա հրապարակային հայտարարությունները, դրանցում նշված ահազանգերի կապակցությամբ ձեռնարկված իրավական միջոցների, իրականացված քրեական վարույթների արդյունքները: Որպես տեղեկության աղբյուր՝ օգտագործվել են նաև զանգվածային լրատվության միջոցներով դիտորդական հասարակական կազմակերպությունների, իրավապաշտպանների՝ զանգվածային

² Տե՛ս, <http://ombuds.am/article/1084>:

լրատվության միջոցներով ներկայացված հրապարակային զեկույցները կամ հաշվետվությունները:

Սույն զեկույցի հրապարակման ժամանակահատվածը պայմանավորված է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բոլոր ահազանգերի կապակցությամբ իրականացված քրեական, այդ թվում՝ դատական վարույթների վերաբերյալ լիարժեք տեղեկություններ ունենալու և, հետևաբար, զեկույցի ամբողջականությունն ապահովելու նպատակով:

III. Քարոզչությունը սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ընթացքում

2015թ. հոկտեմբերի 5-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին» որոշումը: Խորհրդարանի որոշման ընդունմանը օրը հրապարակվեց նաև Վենետիկի հանձնաժողովի նախագահի ուղերձը ԱԺ-ին, որտեղ նա ողջունել էր սահմանադրական փոփոխություններն ու դրական գնահատական տրվել նախագծի բովանդակությանը, ինչպես նաև կարևորել հանրաքվեի պատշաճ կերպով անցկացման անհրաժեշտությունը:

Ազգային ժողովի որոշման հիման վրա էլ ՀՀ նախագահը հոկտեմբերի 8-ին հրապարակեց հրամանագիր, և հանրաքվեի օր նշանակվել 2015 թվականի դեկտեմբերի 6-ը: Դրանից հետո՝ 2015 թվականի հոկտեմբերի 10-ից սկսվել է հանրաքվեի պաշտոնական քարոզարշավը, որն ավարտվել է 2015 թվականի դեկտեմբերի 4-ին:

Ընհանրապես, ցանկացած ընտրական ցանկացած գործընթացի, այդ թվում՝ հանրաքվեի հետ կապված քարոզչությունն ունի կարևոր նշանակություն այդ գործընթացի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ մատելուցելու, հանրային վերահսկողություն ապահովելու տեսանկյունից: Քարոզչությունն է, որ ընտրական գործընթացի մասնակիցներին հնարավորություն է տալիս հանրությանը ներկայացնել իրենց դիրքորոշումները և դրանով իսկ ապահովել հանրային պատշաճ իրազեկումը, ուստի և ընտրական գործընթացի արդյունքի տեսանկյունից արժանահավատ տվյալներ: Քարոզչության ընթացքում խախտումները վտանգավոր են հանրային վստահության և, հետևաբար, ողջ գործընթացի հավաստիության տեսանկյունից:

Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի քարոզարշավի վերաբերյալ դիտորդական կազմակերպությունների տվյալների համաձայն՝ սահմանադրական փոփոխությունների կողմնակիցների քարոզարշավը

կազմակերպվել և ընթացել է վարչական ռեսուրսի չարաշահման դրսևորումներով, ինչը ստեղծել է անհավասար պայմաններ նախագծի կողմնակիցների և ընդդիմախոսների համար³: Հանրաքվեի ընթացքում «Այո» քարոզարշավի համար հանրային միջոցների օգտագործման մասին նշվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ զեկույցում⁴: Դրանից բացի, համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրական հանրաքվեի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանրաքվեի փորձագիտական խմբի վերջնական զեկույցի՝ «2015 թ. Հանրաքվեի մասին օրենքի մեկ այլ փոփոխություն թույլատրում է քարոզչություն կատարել պաշտոնական քարոզարշավի ժամանակացույցից դուրս, բացառությամբ քարոզչության լուրջ ժամանակահատվածի: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի մի քանի զրուցակիցներն ընդգծել են, որ այս փոփոխությունից շահել է «Այո» քարոզչությունը, որը սկսել է գործել մինչև հանրաքվեի պաշտոնական հրապարակումը»⁵:

«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ», «Իրավունքի Եվրոպա միավորում», «Թրանսփերենսի ինթերնեշնլ» կազմակերպությունների կողմից Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած դիտարկումների համաձայն՝ մարզերի ոչ բոլոր բնակիչների համար է հանրաքվեի դրված նախագիծը լիարժեք հասանելի եղել: Ըստ այդմ, արձանագրվել են դեպքեր, երբ չի ապահովվել բավարար իրազեկում Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ:

Արձանագրվել են նաև խտրական վերաբերմունքի առանձին դեպքեր, ի վնաս «Ոչ»-ի քարոզարշավի, կապված հրապարակային հանդիպումների կամ քննարկումների անցկացման հետ: Օրինակ՝ «Ընդդեմ իրավական կամայականության» և «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» կազմակերպությունների կողմից Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրած տեղեկությունների համաձայն՝ օրինակ, դահլիճի տրամադրման հարցում խնդիր է

³ Տե՛ս, <http://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf>:

⁴ Տե՛ս, <http://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>.

⁵ Տե՛ս, նույն տեղում:

արձանագրվել Մարտունի քաղաքում, իսկ Մեղրիում քաղաքապետի կողմից արձանագրվել է քաղաքացիների նկատմամբ ճնշումներ գործադրելու դեպքեր⁶:

«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության կողմից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացրած և Պաշտպանի աշխատակազմում առկա դիտարկումների համաձայն՝ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը չի ընձեռում հավասար պայմաններ «Այո»-ի ու «Ոչ»-ի համար, դրանց հավասարության ապահովվումը դեկլարատիվ բնույթ է կրում, իսկ հետագա կարգավորումները չեն հավասարակշռում «Այո»-ի ու «Ոչ»-ի հավասարությունը: Կազմակերպությունն իրավացիորեն աջարկում է, ըստ այդմ, սահմանել «Այո»-ի ու «Ոչ»-ի հավասարություն, հավասար եթերաժամ, որպեսզի մարդիկ հավասարապես լսեն «Այո»-ն ու «Ոչ»-ը այլ, ոչ թե խմբակցությունների քանակով պայմանավորված «Այո» ու «Ոչ»-ի կողմնակիցների եթերները: Այս առումով, կազմակերպության կողմից արդարացիորեն առաջարկվում է նաև ամրապնդել երաշխիքները՝ կապված արտախորհրդարանական կուսակցություններին և հասարակական կազմակերպություններին քարոզչության գործընթացին մասնակցության հետ:

Հանրաքվեի վերաբերյալ հրապարակային նյութերում առկա են նաև տվյալներ այն մասին, որ արձանագրվել են դեպքեր, երբ քարոզչական աշխատանք է տարվել նաև ուսումնակրթական հիմնարկների վարչակազմերի կողմից: Ընդ որում, լրատվության միջոցների հրապարակումները վկայում են, որ մի կողմից այդ հիմնարկների վարչակազմերը պնդում են, որ ընդհանրապես հիմնարկներում քարոզչություն չի կարելի իրականացնել, իսկ մյուս կողմից արձանագրվել են դեպքեր, երբ հենց նման վարչակազմերի ներկայացուցիչներն են իրականացնել քարոզչություն հոգուտ «Այո»-ի⁷: Արձանագրվել են նաև հրապարակումներ այն մասին, որ կրթական որոշ հաստատություններում իրականացնում են ցուցակագրում՝ «այո»-ի համար ձայներ ապահովելու նպատակով⁸: Իրականում, սակայն, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմը չի կարող պաշտոնական

⁶ Այս մասին տե՛ս նաև, <http://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf>:

⁷ Տե՛ս, օրինակ, <http://www.azatutyun.am/a/27316749.html>; <http://www.aravot.am/2015/12/03/635315/>:

⁸ Տե՛ս, օրինակ, <http://top-news.am/7/1/news/54824.html>:

պարտականություններ կատարելիս զբաղվել քարոզչությամբ: Սա արձանագրվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ վերը մեջբերված զեկույցում⁹:

⁹ Տե՛ս, <http://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>:

IV. Չանգվածային լրատվության միջոցների գործունեությունը և տեղեկատվության ազատության ապահովումը

Չանգվածային լրատվության միջոցները և լրագրողներն ունեն կարևորագույն դեր ժողովրդավարական հասարակությունում տեղեկատվության ազատության իրացման համար: Լրատվության միջոցների ազատ ու հավասար գործունեությունն է այն երաշխիքը, որ մի կողմից հասարակությանը հնարավորություն է տալիս լիարժեք իրացնելու տեղեկատվության ազատության իրենց իրավունքը, իսկ մյուս կողմից պետական մարմիններին զերծ է պահում կամայականություններից ու խախտումներից: Լրատվամիջոցների դերն առանձնապես կարևոր ու զգայուն է պետական և հասարակական կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի իրադարձությունների համար, ինչպիսիք են ընտրությունները կամ հանրաքվեները:

Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքում Չանգվածային լրատվության միջոցների գործունեության հետ կապված զեկույցներ կամ հաշվետվություններ են հրապարակել ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպությունները:

Օրինակ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանրաքվեի վերաբերյալ զեկույցում նշվում է, որ Հայաստանի լրատվական դաշտը ընկալվում է որպես մեծապես քաղաքականացված: Մեծ թվով լրատվամիջոցներ գործում են սահմանափակ գովազդային շուկայում, որը պայմանավորված տնտեսական լճացման հետ էլ ավելի է փոքրացել: ըստ ԵԱՀԿ զեկույցի՝ հեռուստատեսությունը (TV) շարունակում է մնալ տեղեկատվության հիմնական աղբյուր, մինչդեռ համացանցը, որպես այլընտրանքային տեղեկատվության աղբյուր, արագորեն ձեռք է բերում ժողովրդականություն՝ հատկապես Երևանում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի մի շարք զրուցակիցներ մտահոգություն էին հայտնում համապետական հեռարձակողների վրա հայտնի քաղաքական կուսակցությունների կողմից վերահսկողություն հաստատելու վերաբերյալ: ԵԱՀԿ փորձագետների իրենց, սակայն, չի հաջողվել ստուգել այս պնդումը լրատվամիջոցների սեփականության թափանցիկության բացակայության պատճառով, քանի որ համապետական սփռում ունեցող մասնավոր հեռուստաընկերությունների մեծ մասը գրանցված են որպես փակ

բաժնետիրական ընկերություններ, և, այդպիսով, դրանց մասին տեղեկությունները գրառված չեն հանրային ռեգիստրում: Հանրային հեռարձակողները՝ Հայաստանի Հանրային Հեռուստատեսությունը (< 1) և Հայաստանի հանրային ռադիոն (Արմռադիո), ղեկավարվում են Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի կողմից, որը կազմված է հինգ անդամներից, որոնք նշանակվում են Նախագահի կողմից: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ) հանդիսանում է հեռարձակվող լրատվամիջոցները կարգավորող հիմնական մարմինը: Այն բաղկացած է ութ անդամներից, որոնց մի կեսը առաջադրված է նախագահի կողմից, իսկ մյուս կեսը՝ խորհրդարանի կողմից:

Ըստ այդմ, ինչպես եզրահանգել է ԵԱՀԿ-ն, միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի ապահովվի լրատվամիջոցների սեփականության լիարժեք թափանցիկությունը՝ պահանջելով և հնարավորություն տալով ՀՌԱՀ-ին հստակորեն նշել լրատվամիջոցների վերջնական և շահառու սեփականատերերին: Պետք է կիրառել լրացուցիչ վերահսկում և պատժամիջոցներ, որպեսզի լրատվամիջոցները իրավասու մարմիններին տրամադրեն սեփականության և ֆինանսավորման վերաբերյալ համապարփակ և ժամանակին արված տեղեկատվություն¹⁰: Լրատվամիջոցների սեփականության և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լիարժեք հասանելի լինի հանրությանը:

Զանգվածային լրատվության միջոցների պաշտպանվածությունը և նրանց աշխատանքի անվտանգ պայմանների ապահովումը կազմում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առանձնահատուկ ուշադրության և մտահոգության առարկան: 2016 թվականի դեկտեմբերի 6-ին լրագրողների, դիտորդների եւ հանձնաժողովի անդամների գործունեությունը խոչընդոտելու հետ կապված Մարդու իրավունքների պաշտպանն իր հերթին արձանագրել է 11 դեպք, ինչպես այդ մասին նշված է Մարդու իրավունքների պաշտպանի 2015 թվականի դեկտեմբերի 7-ի հրապարակային հայտարարության մեջ: Ընդ որում, համաձայն նույն

¹⁰ Տե՛ս, <http://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>:

հաղորդագրության՝ նշված դեպքերից 8-ը կարգավորվել է Պաշտպանի աշխատակազմի միջամտության արդյունքում¹¹:

Լրագրողների և դիտորդների աշխատանքը խոչընդոտելու նրանց նկատմամբ սպառնալիքներ հնչեցնելու, վիրավորելու, ինչպես նաև լրագրողների ու դիտորդների հետ լարված վեճերի բռնվելու դեպքեր են արձանագրվել նաև «Հայաստանի հելսինկյան կոմիտե», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» և մի շարք այլ հասարակական իրավապաշտպան կազմակերպությունների զեկույցներում (օրինակ՝ արձանագրվել վատ վերաբերմունքի դեպքեր «Ասպարեզ» թերթի լրագրողի, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ դիտորդի նկատմամբ և այլն)¹²: Ավելին, ըստ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության տվյալների՝ Քվեարկության օրն արձանագրված դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների իրավունքների խախտումների կապակցությամբ ՀԸՀ-ներ և ՀԿՀ ներկայացվել են մոտ 87 տեղամասերում տեղ գտած՝ 150 անձի իրավունքների խախտման փաստերով դիմում-բողոքներ¹³:

Պետք է նշել, որ Հայաստանում լրագրողների գործունեության, նրանց աղբյուրների պաշտպանության անհրաժեշտության վերաբերյալ հրապարակային հայտարարություններով է հանես եկել նաև ԵԱՀԿ Լրատվության ազատության հարցերով ներկայացուցչի կողմից¹⁴:

Այսպիսի իրավիճակը տեղեկատվության ազատության և լրագրողական գործունեության պաշտպանության տեսանկյունից ընդունելի չէ: Հայաստանում լրագրողների պաշտպանվածության ոչ բավարար մակարդակի վերաբերյալ

¹¹ Տե՛ս, <http://ombuds.am/article/1084>:

¹² Տե՛ս, օրինակ, <http://hra.am/i/up/referendum%20final%20report%20ARM.pdf>; <http://armhels.com/wp-content/uploads/2015/12/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%83%D5%B8%D6%83%D5%B8%D5%AD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D6%84%D5%BE%D5%A5%D5%AB-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%A2%D5%A5%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC-.pdf> :

¹³ <http://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf> :

¹⁴ Տե՛ս, օրինակ, <http://www.osce.org/fom/124611>:

մտահոգություններ, այդ առումով գործող օրենսդրության կատարելագործման ու պատժողական քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկներ մշտապես բարձրացվել են Մարդու իրավունքների պաշտպանների տարեկան զեկույցներում ու հրապարակային հայտարարություններում: Պետք է հետևողական աշխատանք տանել՝ ուղղված արձանագրված խնդիրների լուծմանը:

Մասնավորապես, անհրաժեշտ է օրենքով նախատեսված բոլոր հնարավորություններով խիստ և արագ արձագանքել լրագրողի նկատմամբ հնչող ցանկացած սպառնալիքի կամ բռնության դեպքի նկատմամբ: Ընդ որում, պետք է հետևողական լինել, որպեսզի մեղավոր անձինք պարտադիր ենթարկվեն պատասխանատվության՝ օրենքի ողջ խստությամբ: Հակառակ իրավիճակը նշանակում է նպաստել անպատժելիության արմատավորմանը, ինչը վտանգավոր է հետագա նմանատիպ խախտումները կանխարգելելու և լրագրողների անվանգությունը, նրանց գործունեության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից: Մյուս կողմից, իհարկե, անհրաժեշտ է հստակեցնել նաև օրենսդրական կարգավորումներն այն առումով, թե ով է համարվում լրագրող և ինչ պայմաններով կարող է գործունեություն իրականացնել ընտրական գործընթացների ժամանակ: Այսպիսի հստակ կանոնակարգումները կնպաստեն լրագրողների առավել պաշտպանվածությանը, ինչպես նաև որոշակիության ամրապանմանը տեղեկատվության ազատության պաշտպանության ոլորտում:

Դիտորդական կազմակերպությունների գնահատականների և լրատվության միջոցների առանձին հրապարակումների ուսումնասիրությունը վկայում է, որ խոսքի ազատության արդյունավետ պաշտպանության և լրագրողների լիարժեք աշխատանքի կարևոր նախադրյալ է նաև լրագրողների շրջանում իրազեկության բարձր մակարդակի ապահովումը հանրաքվեի գործընթացի և, ընդհանրապես, ընտրական գործընթացների նկատմամբ: Պետությունն ինքը պետք է շահագրգռված լինի այս խնդրի լուծման հարցում: Ուստի, հենց պետությունն ինքը պետք է նախաձեռնի հետևողական միջոցառումների համակարգի մշակման և իրականացման գործընթաց.

դա պետք է ուղղված լինի նաև հենց լրագրողների և լրատվական գործունեություն իրականացնողների շրջանում իրազեկության բարձրացմանը ընտրական գործընթացների, այդ ընթացքում լրագրողների և դիտորդների իրավական պաշտպանության հնարավորությունների մասին: Ընտրական օրենսդրության մեջ կատարվող ցանկացած փոփոխություն պետք է պարզաբանվի և մատչելի կերպով ներկայացվի լրագրողներին (խոսքը վերաբերում է բոլոր տեսակի լրատվամիջոցներին՝ էլեկտրոնային, տպագիր և այլն): Ընդ որում, իրազեկության բարձրացումն անհրաժեշտ է անել այնպես, որպեսզի լրագրողները կամ դիտորդները հստակ իմանան՝ իրավական պաշտպանության հարցում որ մարմնից ինչ է անհրաժեշտ ակնկալել իրավունքի խախտման դեպքում կամ որ մարմնին իրավական պաշտպանության ինչպիսի խնդրանք պետք է ներկայացվի: Անհրաժեշտ է դա անել նաև համապատասխան ուղեցույցեր մշակելու միջոցով¹⁵:

Հանրաքվեին նախորդած ժամանակաշրջանում լրատվության միջոցներով քարոզարշավի վերաբերյալ դիտարկումների ուսումնասիրությունը վկայում է, որ անհավասար վերաբերմունքի դեպքեր են արձանագրվել նաև «Այո»-ի կամ «Ոչ»-ի դիրքորոշումները լուսաբանելու տեսանկյունից: Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին «Իրավունքի Եվրոպա միավորում» կազմակերպության փոխանցմամբ անհավասարության դրսևորում է եղել, օրինակ, Հանրային հեռուստատեսությամբ «Եռանկյունի» թոք-շոուի հեռարձակումը: Ըստ նշված իրավապաշտպան կազմակերպության՝ այդ հաղորդումը գործող նախարարի կողմից վարելը եղել է անհավասարության դրսևորում, քանի որ դրսևորվել է նրա կողմից կողմնակալ վերաբերմունք: Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ մեջբերված զեկույցի՝ նման պրակտիկան, թեև արգելված չէ, սակայն կասկածի տակ է դրել հանրային հեռուստաալիքի անկողմնակալությունը¹⁶:

Վերը նշվածից բացի, անհրաժեշտ է նաև ուժեղացնել պետության ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ երաշխավորելու համար առավել հավասար

¹⁵ Սրանք նաև պետության կողմից պահպանության ենթակա՝ միջազգայնորեն ընդունված աշխատանքի սկզբունքներ են: Տե՛ս, օրինակ, <http://www.osce.org/odihr/elections/104573?download=true>:

¹⁶ Տե՛ս, <http://www.osce.org/fom/124611>:

պայմաններ ընտրական գործընթացի մասնակիցների համար: Այս առումով, ինչպես նշվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ փորձագիտական խմբի կողմից, անհրաժեշտ է բարձրացնել ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) վերահսկողական դերը քարոզարշավի ժամանակ և դրանից դուրս ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ և սեփական ռեսուրսների հաշվին անմիջական մոնիտորինգային ուսումնասիրություններ իրականացնելու հարցում: Այսպիսի լուծումները հնարավորություն են տալիս գործնականում առավել մեծ արդյունավետություն ապահովել:

V. Ընտրացուցակների անճշտությունների և դիտորդական առաքելության ընթացքում իրավունքների ապահովման ոլորտում արձանագրված խնդիրները

Դիտորդական գործունեություն իրականացրած իրավապաշտպան կազմակերպությունների դիտարկումների համաձայն՝ հանրաքվեի ընթացքում գրանցվել են ընտրացուցակների հետ կապված խախտումների ու անճշտությունների դեպքեր: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացրած տվյալների համաձայն՝ արձանագրվել են մահացածների կամ արտերկրում գտնվողների ընդգրկում ցուցակներում, մեկ անձի ընդգրկում տարբեր տեղամասերի ցուցակներում: Արձանագրվել են նաև այլ անձի փոխարեն քվեարկության դեպքեր, իսկ մի շարք դեպքերում արդեն իսկ մարդկանց անվան դիմաց եղել են ստորագրություններ:

Վերը նշված ընդհանուր դիտարկումներից բացի, օրինակ, Գյումրիի տեղամասերից մեկում ցուցակներում ներառված է եղել 10 տարի առաջ մահացած անձի անուն-ազգանուն: Արձանագրվել է դեպք, երբ տղամարդը քվեարկել է ուրիշ կնոջ անձնագրով: Օրինակ՝ թիվ 10/2 ընտրատեղամասում մեծահասակներին օգնել են մասնակցել քվեարկությանը, սակայն ոչ մեկը որպես ուղեկցող անձ չի գրանցվել: Գրանցվել են նաև քաղաքացիներին նույնականացման քարտեր բաժանելու դեպքեր՝ քվեարկելու համար: Արձանագրվել են դեպքեր, երբ քվեախցիկին մոտեցել է երկու հոգի, սակայն հանձնաժողովի նախագահի կողմից դա չի արձանագրվել և չի կանխվել (օրինակ՝ 29/25, 30/35 ընտրատեղամասեր): Արձանագրվել են նաև վստահված անձանց կողմից քաղաքացիներին տեղամասեր բերելու կամ ուղղորդելու դեպքեր:

Ըստ հրապարակային տվյալների՝ գրացվել են հանձնաժողովների նախագահների և հանձնաժողովների անդամների կողմից դիտորդների նկատմամբ սպառնալիքի և վիրավորանքի դեպքեր: Սա անթույլատրելի է, քանի որ հանձնաժողովի ղեկավարի նման վարքագիծը կարող է վտանգել կոնկրետ ընտրատեղամասում քվեարկության բնականոն ընթացքը:

Դիտորդների նկատմամբ սպառնալիքների և վիրավորանքի դեպքեր են արձանագրվել են նաև իրավապաշտպան կազմակերպությունների կողմից:

Դիտորդների գործունեությունը կազմում է ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողություն ապահովող մեխանիզմի բաղկացուցիչ մասը: Դիտորդների գործունեության շնորհիվ է նաև, որ հնարավոր է լինում կանխել ընտրախախտումներ, ինչպես նաև ապահովել քվեարկության բնականոն ընթացք ընտրատեղամասերում: Դիտորդների նկատմամբ սպառնալիքների և նրանց նկատմամբ վիրավորանքի վերաբերյալ տվյալները դիտորդական առաքելություն իրականացրած կազմակերպությունների կողմից հրապարակվել են զանգվածային լրատվության միջոցներով (օրինակ՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ», «Թրանսփերենսի ինթերնեշնլ», «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպությունների տվյալներ)¹⁷:

Վերը նշվածի տեսանկյունից, կարևոր հարց է դառնում հանձնաժողովների նախագահների և անդամների իրազեկության և նրանց մասնագիտական պատրաստվածության աստիճանի շարունակական բարձրացումը: Մասնավորապես, դիտորդական կազմակերպությունների հրապարակային գնահատականների ուսումնասիրությունը վկայում է, որ խախտումների որոշակի կատեգորիա կապված է հանձնաժողովների կազմերի կողմից իրենց իրավունքների ու պարտականությունների ոչ պատշաճ իմացության հետ: Իրազեկության պակասն էլ դառնում է ընտրատեղամասում տեղի ունեցող խախտումները ժամանակին չհայտնաբերելու ու չկանխելու, և հակառակը՝ օրինականության սահմաններում գործող ընտրական գործընթացի մասնակիցներին աջակցելու հետ (օրինակ՝ դիտորդների կամ վստահված անձանց կողմից անձը հաստատող փաստաթղթեր կրելու հարցը¹⁸ և այլն):

Այս առումով, կարևոր դիտարկումներ է իրականացրել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանրաքվեի փորձագիտական խումբը: Մասնավորապես, խմբի վերջնական զեկույցում

¹⁷Տե՛ս, <http://hcav.am/wp-content/uploads/2016/01/Constitutional-Reform-2015.pdf>,
<http://hra.am/i/up/referendum%20final%20report%20ARM.pdf>,
<http://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf>:

¹⁸ Տե՛ս, <http://transparency.am/files/publications/1454928096-0-529110.pdf>:

նշվում է, որ ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ ՀՓԽ-ի կողմից դիտարկված ընտրատեղամասերում քվեարկության գործընթացը, ընդհանուր առմամբ, հանգիստ է անցել, և քվեարկության ընթացակարգերը, հիմնականում, պահպանվել են: Սակայն որպես հետևանք օրենքի նոր ընդունված դրույթի՝ ընտրողների նույնականացման վկայականները չէին կնքվել, ինչը հանգեցրել էր բազմակի քվեարկության դեմ երաշխիքի հակասական կիրառմանը: Ուստի, պետք է ներդրվեն արդյունավետ և հետևողական երաշխիքներ բազմակի քվեարկության դեմ, որը կկիրառվի բոլոր ընտրողների նկատմամբ՝ անկախ նույնականացման նպատակով ընտրողի կողմից օգտագործվող փաստաթղթի տեսակից:

Սույն զեկույցի շրջանակներում անհրաժեշտ է նշել նաև, որ ինչպես իրավացիորեն արձանագրվել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության զեկույցում, կարևոր նշանակություն ունի ընտրատեղամասերի նախապատրաստումը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է քարոզչական նյութերի առկայությանը տեղամասում և տեղամասի սխալ կահավորմանը, ինչպես նաև տեղամասերի մատչելիության բացակայությունը սայլակով տեղաշարժվելու համար: Օրինակ՝ թիվ 8/25 տեղամասում ժամը 07:04 սահմաններում դիտորդը արձանագրել է ընտրատեղամասի սխալ կահավորում: Նույն դպրոցում 2 տեղամաս էր, որոնք բաժանված են եղել կապույտ պոլիէթիլենային վարագույրով: Քվեախցերը տեղադրված էին այնպես (3 հատ), որ մեկ տեղամասի ընտրողը տեսանելի էր մյուս տեղամասի քվեախցի ընտրողին: Քվեախցերից մեկի հետնամասում առկա էր դուռ, որով ելումուտ էին անում հանձնաժողովի անդամները և վստահված անձինք՝ խախտելով քվեարկության գաղտնիությունը: Մեկ այլ դեպքում, թիվ 8/27 տեղամասում կահավորումը չի համապատասխանել օրենքով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ քվեախցերի հետևում եղել են դռներ, որտեղից եղել է ելումուտ: Նույն տեղամասում ժամը 18:19 սահմաններում դիտորդն արձանագրել է լուսավորության խնդիր, որը ստիպել է ընտրողին դուրս գալ քվեախցից, ինչը խախտել է ընտրողի քվեարկության գաղտնիությունը: Այս փաստերը հանձնաժողովի կողմից չեն արձանագրվել գրանցամատյանում: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ տեղաշարժման դժվարություն ունեցող ընտրողների համար հանձնաժողովի նախագահը, խախտելով

օրենքը, դուրս է հանել քվեաթերթիկը տեղամասից, մուտքի մոտ քվեարկել են և բերել գցել քվեատուփի մեջ (օրինակ՝ 3/30 և 29/21 ընտրատեղամասեր)¹⁹:

Դրանից բացի, քաղաքական կուսակցությունների վստահված անձինք չպետք է որևէ կերպ կաշկանդված լինեն իրականացնել օրենքով նախատեսված բոլոր գործառույթները, բայց նրանք չպետք է գործադրեն ճնշում կամ միջամտեն քվեարկության օրվա գործողություններին: Քաղաքական կուսակցությունները պետք է ապահովեն իրենց դիտորդների համար համապատասխան ուղղորդում և ուսուցում և կրեն իրավական և քաղաքական պատասխանատվություն՝ իրենց վստահված անձանց վարքագծի համար:

ԸԸՀ-6-ի մի տեղամասում դիտարկվել է ՏԸՀ անդամների և ՀՀԿ-ի վստահված անձանց կողմից քվեների արդյունքների շահարկում՝ ի օգուտ «Այո»-ի: Մասնավորապես, որոշ վավեր «Ոչ» քվեաթերթիկներ անօրինական կերպով հանվել են, իսկ հետո վերադարձվել են որպես անվավեր քվեաթերթիկներ կամ դրվել են սխալ փաթեթում: ԸԸՀ-10-ի մի տեղամասում ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ն դիտարկել է քվեների հաշվարկի ընթացքը, որտեղ գործընթացի թափանցիկությունը չի ապահովվել և դիտարկվել է անհետևողական մոտեցում քվեաթերթիկների վավերականության որոշման հարցում: Ընթացակարգային սխալները հանգեցրել են նրան, որ չեղյալ են համարվել շատ վավեր «Ոչ» քվեներ: ԵԱՀԿ / ԺՀՄԻԳ-ի ՀՓԽ-ն դիտարկել է ձայների հաշվարկմա գործընթացը երկու տեղամասերում և չի կարող որոշել, թե արդյոք հայտնաբերված թերությունները իրենցից ներկայացնում են ավելին քան հակաօրինական առանձին դեպքեր²⁰:

¹⁹ Տե՛ս, <http://transparency.am/files/publications/1454523775-0-366353.pdf>:

²⁰ Տե՛ս, <http://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>:

VI. Հանրաքվեի գործընթացի հետ կապված Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած հաղորդումները և դրանց կապակցությամբ քննության իրականացումը

Ինչպես արդեն նշվել է սույն հրապարակային զեկույցի սկզբնական շարադրանքում, 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ստացվել 67 ահազանգ: Դրանք բոլոր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուղարկվել են համապատասխան քրեական հետապնդման մարմիններին՝ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

Ահազանգերը հիմնականում վերաբերել են լրագրողների, դիտորդների եւ հանձնաժողովի անդամների գործունեության խոչընդոտմանը, ընտրական գործընթացի ոչ պատճաշ կազմակերպմանը, ընտրացուցակներում եղած անճշտություններին եւ կրկնաքվեարկությանը, տեղամասերում մարդկանց կուտակումներին, քաղաքացիներին ոչ իրավաչափ բերման ենթարկելուն, լցոնումներին, ընտրակաշառքի բաժանմանը, անձնագրերի եւ դրանց մեջ դրվող կնիքների հետ կապված խնդիրներին, քվեաթերթիկների հաշվման ընթացքում առաջացած խնդիրներին:

Ահազանգերի քննարկման արդյունքների վերաբերյալ ամփոփ տվյալները վկայում են, որ դրանցից միայն 18 դեպքի կապակցությամբ է հարուցվել քրեական գործ: Մնացած բոլոր դեպքերում քրեական գործի հարուցումը մերժվել է: Հարուցված քրեական գործերից 6-ով քրեական գործի նախաքննության արդյունքում որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին, իսկ մեկ դեպքով էլ՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասին: Մնացած դեպքերով հարուցված գործերն ուղարկվել են դատարան, որոնցով էլ կայացվել են դատավճիռներ:

Ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված, այնպես էլ այլ ահազանգերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց առթիվ իրականացված

քննության արդյունքում մեղավոր անձինք պրակտիկայում դատապարտվում են տուգանքի:

Համաձայն ՀՀ գլխավոր դատախազության ս.թ. մայիսի 27-ի հրապարակային հայտարարության՝ մայիսի 27-ի դրությամբ ՀՀ դատախազությունում ուսումնասիրվել է ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքի իրացմանը խոչընդոտելու վերաբերյալ 597 տարբեր բնույթի տեղեկատվություն (ՁԼՄ-ների և ՀԿ-ների հրապարակումներ, նաև քաղաքացիների ահազանգեր և գրավոր դիմումներ): Հարուցվել է 79 քրեական գործ, 47 քրեական գործ 51 անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 53 քրեական գործով 56 անձիք ներգրավվել են որպես մեղադրյալ, 31 քրեական գործ կարճվել է, 2 քրեական գործի վարույթ կասեցվել է, նախաքննական և հետաքննական մարմինների կողմից 504 տեղեկությունների ստուգման արդյունքում քրեական գործի հարուցումը մերժվել է, 39 քրեական գործով 43 անձի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ²¹:

Չնայած հանցագործությունների մասին շուրջ 600 հաղորդումներին ու, հետևաբար, նաև ստուգված նյութերին, այդուհանդերձ, ինչպես վկայում է կայացված մեղադրական դատավճիռների ուսումնասիրությունը, վերոհիշյալ քրեական գործերի քննության արդյունքում քրեական պատասխանատվության ենթարկված անձանց նկատմամբ նշանակվել է առավելապես տուգանք պատժատեսակը:

Օրինակ՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության վստահված անձ Ա.Խ.-ն թիվ 5/28 տեղամասում խոչընդոտել է հանրաքվեի ընթացքը լուսաբանող զանգվածային լրատվության միջոց <<Հետք.ամ>> էլեկտրոնային կայքի ներկայացուցիչ լրագրողի գործունեությանը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի օրը՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ին, ժամը 14:25-ին, Ա.Խ.-ն ներս է մտել Երևան քաղաքի Բաղրամյան 76 հասցեում գործող թիվ 5/28 տեղամաս և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դիտավորությամբ, մոտենալով <<Հետք.ամ>> էլեկտրոնային կայքի խմբագրության

²¹ <http://prosecutor.am/am/news/6499/>:

հանձնարարությամբ հանրաքվեի ընթացքը լուսաբանող լրագրող Դիանա Ղազարյանին՝ պահանջել է դադարեցնել նկարահանումները, նյութերի նախապատրաստումը և հեռանալ ընտրատեղամասից, այնուհետև վերցրել է նրա դյուրակիր համակարգիչն ու դուրս եկել տեղամասից՝ իր դիտավորյալ գործողություններով խոչընդոտելով «Հետք.ամ» կայքի ներկայացուցիչ Դիանա Ղազարյանի կողմից ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքը լուսաբանելու նրա լիազորությունների ազատ իրականացմանը:

Փաստի առթիվ ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Այնուհետև, ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից իրականացված նախաքննության ընթացքում Ա.Խ.-ին նշված արարքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրվել է մեղադրանք: 2016 թվականի փետրվարի 10-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել էրևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան: Դատարանի 2016 թվականի մայիսի 4-ի դատավճռով հանցանքի մեջ մեղադրվող անձը ճանաչվել է մեղավոր և դատապատրվել է տուգանքի՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի 600 (վեց հարյուր)-ապատիկի՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով²²:

Մեկ այլ օրինակ է այն, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի՝ Երևան քաղաքի Մամիկոնյանց 34 հասցեում գտնվող, Սարաջևի անվան երաժշտական դպրոցում տեղակայված թիվ 4/05 տեղամասային հանձնաժողովի նախագահ Ս.Ա.-ն քվեարկության ընթացքում ժամը 14.00-ի սահմաններում տեղամասային կենտրոնում նկատել է, որ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության անունից ՀՀ ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով դիտորդական առաքելություն իրականացնող Գ.Ա.-ն բջջային հեռախոսով տեսաձայնագրում է քաղաքացու հայտարարությունը:

²² <http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal:>

Տեղեկանալով, որ դիտորդը տեսանկարահանմամբ արձանագրում է երկու քաղաքացու հայտարարություն՝ վեջինիս դատեր Տաթևիկ Հարությունյանի Հայաստանից բացակայելու և նրա փոխարեն այլ անձի կողմից քվեարկած լինելու վերաբերյալ, Ս.Ա.-ն, դիտորդի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու դիտավորությամբ, մոտեցել և դիտորդի Գ.Ա.-ի ձեռքից խլել է բջջային հեռախոսն ու նրան զրկել ընտրախախտումը արձանագրելու հնարավորությունից, այդպիսով խոչընդոտել է նրա ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված լիազորությունների իրականացմանը: Ընդ որում, նույն գործով կայացված դատական ակտով հաստատվել է նաև, որ Ս.Ա.-ն լինելով Երևան քաղաքի Մամիկոնյանց 34բ հասցեում կազմակերպված թիվ 4/05 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ, այլ անձանց փոխարեն քվեարկելու մեկ միասնական դիտավորությամբ թիվ 2 մատյանում կեղծիք կատարելու եղանակով քվեարկել է երկու անձի փոխարեն:

Փաստի առթիվ հարուցված քրեական գործով ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացվել է նախաքննություն և, այնուհետև, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի հունիսի 22-ի դատավճռով նշված հանցանքների կատարման մեջ մեղադրվող անձը ճանաչվել է մեղավոր և դատապատրվել է տուգանքի՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի 1000 (հազար)-ապատիկի՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամի չափով²³:

Մյուս գործերի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ ընտրական գործընթացների հետ կապված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ կայացված դատավճիռներով նշանակվել են պատիժներ տուգանքի ձևով²⁴:

Այսպիսի վիճակագրական տվյալների հետ կապված, հարկ է անմիջապես արձանագրել, որ այդ պրակտիկան նման իրավախախտումները կանխարգելելու,

²³ <http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal>: Այս գործով կայացված դատավճիռը գտնվում է ամբաստանյալի կողմից բողոքարկման փուլում:

²⁴ <http://www.azatutyun.am/a/27529668.html>, <http://www.panarmenian.net/arm/news/206792/>, <http://www.azatutyun.am/a/27632915.html>, <https://www.youtube.com/watch?v=9N5y9vmicpY&feature=youtu.be>:

հետագայում դրանց կրկնությունը բացառելու նպատակով չի կարող արդյունավետություն ունենալ: Բանն այն է, որ այդ հանցավոր արարքներն իրենց բնույթով առավել վտանգավոր են, ոտնձգում են քաղաքացիների իրավունքների դեմ և որ ավելի հիմնարար է՝ պետական իշխանության մարմինների ձևավորման ժողովրդավարության հիմքերին: Ուստի, անհրաժեշտ է խիստ մոտեցումներ ցուցաբերել այս առումով: Հարցը նույնքան արդիական է նաև հանրաքվեի գործընթացի առնչությամբ, որի միջոցով ժողովուրդն իր անմիջական կամահայտնության միջոցով ընդունում է երկրի մայր օրենքը:

Այսպիսի իրավիճակն ընդունելի չէ նաև ընտրական գործընթացների նկատմամբ հանրային ընկալման և քաղաքացիների իրավունքների դեմ ոտնձգող արարքների դեմ պետության իրավասու մարմինների կողմից տարվող պայքարի նկատմամբ վստահության ապահովման տեսանկյունից: Բանն այն է, որ ընտրական գործընթացներն ունեն չափազանց զգայուն բնույթ քաղաքացու իրավունքների իրականացման տեսանկյունից: Այդ պատճառով դրանք ունենում են նաև հանրային մեծ նշանակություն, ինչը կապված է նաև քաղաքացիական հասարակության շարունակական կայացման հետ: Ուստի, այստեղ կարևոր է հանրային ընկալման գործոնը: Իհարկե, ֆորմալ առումով կարելի է պնդել, թե քրեական պատասխանատվության սկզբունքն իրացված է, քանի որ դատարան ուղարկված բոլոր գործերով այդուամենայնիվ անձինք ենթարկվել են քրեական պատասխանատվության՝ թեև նշանակվելով պատժի տուգանքի ձևով:

Այդուհանդերձ, կարծում ենք, որ խնդիրը չի կարելի կտրված դիտարկել և այն պետք է քննարկել ամբողջականության մեջ: Այս առումով, հանրային ընկալման և արդյունավետ աշխատանքի ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է ցույց տալ նաև հենց պատժի խստության սկզբունքի իրացումը: Մասնավորապես, մեծ կարևորություն ունի այն ընկալման ձևավորումը, որ ընտրական գործընթացի հետ կապված հանցանք կատարած ցանկացած անձ բացահայտվելու է և ենթարկվելու է խիստ պատասխանատվության ու պատժի: Մյուս կողմից, իհարկե, ազատությունից զրկելը չպետք է ինքնանպատակ լինի, սակայն համատարած տուգանքների կիրառումը

ընտրական հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ նույնպես չի կարող ընդունելի լինել:

Հանրաքվեի և, ընդհանրապես, ընտրական գործընթացների հետ կապված, առանձնակի կարևոր է, թե պետության իրավասու մարմիններն ինչ աստիճան անհատականացված մոտեցում են ցուցաբերում նշված ոլորտի իրավախախտումներից և հատկապես՝ հանցավոր արարքներից յուրաքանչյուրի նկատմամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է ցուցաբերել տարբերակված, անհատականացված մոտեցում կոնկրետ հանցանքներին քրեաիրավական կոնկրետ գնահատականներ տալու և դրանք կատարած անձանց նկատմամբ պատիժներ նշանակելու առումով: Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրած՝ լրագրողների կամ դիտորդների աշխատանքը խոչընդոտելու կամ նրանց սպառնալու վերաբերյալ ահազանգերի կապակցությամբ ճնշող մեծամասնությամբ քրեական գործերի հարուցումը մերժվել է: «Քրեական դատավարության առանձնահատուկ հատկանիշներով պայմանավորված՝ քրեական գործի հարուցման փուլն ինքնին հնարավորություն չի տալիս իրականացնել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Ուստի, բոլոր նման դեպքերում պետք է հարուցվեն քրեական գործեր և իրականացված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում նոր կայացվեն համապատասխան որոշումներ: Պատճառն այն է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կայացվում է քրեական դատավարության այն փուլի ավարտին, որ կոչվում է նյութերի նախապատրաստություն: Քրեական վարույթի այս փուլն իր առանձնահատկությունների և առավելագույնը 10-օրյա տևողության ժամկետով չի կարող ունենալ այն արդյունավետությունը, ինչ հարուցված գործով քննությունը: Այստեղ սահմանափակ է քննչական և դատավարական այլ այնպիսի գործողությունների շրջանակը, որոնք կարող են նպաստել հանցանքի բացահայտմանը: Օրինակ՝ նյութեր նախապատրաստելու փուլում չեն կարող հանցանքի կատարման մեջ կասկածվող անձանց նկատմամբ կիրառվել ներգործության միջոցներ կամ, ասենք, ազդարարել այն կրիչները որոնք արձանագրել են լրագրողին խոչընդոտելու դեպքը: Քրեական դատավարության այս փուլը

հնարավորություն չի տալիս նույնիսկ անձանց ճանաչել տուժող կամ քաղաքացիական հայցվոր և դրանով պայմանավորված՝ արդյունավետ չէ հենց տուժողների իրավական պաշտպանության տեսանկյունից: Բացի այդ, նման պրակտիկայի արդյունքում անձը զրկվում է հանցանքի հետևանքով քրեական դատավարության շրջանակներում կրած նյութական վնասները հատուցելու պահանջ ներկայացնելու իրավական հնարավորությունից: Այստեղ չեն կարող հարցաքննություններ իրականացվել. առավելագույնը հնարավոր է բացատրություն վերցնել դեպքի վերաբերյալ տեղեկություններ ունեցող անձանցից:

Վերը շարադրվածից բացի, նյութերի նախապատրաստման փուլի շրջանակներում հնարավոր չէ անձին տալ դատավարության մասնակցի կարգավիճակ: Օրինակ՝ լրագրողի կամ դիտորդի գործունեությունը խոչընդոտելուն առնչվող նյութերով հնարավոր չէ անձին ճանաչել տուժող: Արդյունքում՝ ենթադրյալ հանցանքից տուժած անձը չի կարողանում քրեական վարույթի ընթացքում իրացնել իր իրավունքները կամ օգտվել իրավական պաշտպանության հնարավորություններից (օրինակ՝ քննիչին միջնորդություններ ներկայացնելը, փաստաբան ունենալը, ցուցմունք տալու իրավունքը, քննիչի կամ դատախազի գործողություններն (անգործությունը) կամ որոշումները բողոքարկելը և այլն):

Իհարկե, նման սահմանափակումները պայմանավորված են ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի կարգավորումներով և ֆորմալ առումով քրեական գործի հարուցելու հարցը լուծելու նպատակով նյութերի նախապատրաստություն իրականացնող սուբյեկտները չեն կարող դուրս գալ դրա շրջանակներից: Սակայն հենց սա է պատճառը, որ մինչև համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելը պետք է որդեգրել պրակտիկա, որի ուժով ընտրական գործընթացների վերաբերյալ հաղորդումների կապակցությամբ հնարավոր կլինի հարուցել քրեական գործեր և հարուցված քրեական գործերի քննության արդյունքում նոր միայն կայացնել վարույթը եզրափակող որոշումներ:

Այս իրավիճակի պատճառ են թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, թե՛ ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները: Այդ օրենսգրքերի՝ խորհրդային

իրավական համակարգից մնացած ինստիտուտները որևէ կերպ չեն նպաստում թե՛ քրեական դատավարության խնդիրների լուծմանը, թե՛ քրեական դատավարության շրջանակներում անձի իրավունքների լիարժեք պաշտպանությանը:

Խնդրահարույց են նաև ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները: Ինչպես արդեն նշվեց, դատարան ուղարկված բոլոր գործերով, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված ահազանգերի կապակցությամբ իրականացված քննության արդյունքում նշանակվել են առավելագույնը տուգանքներ: Այստեղ նույնպես մի կողմից խնդիրը ՀՀ քրեական օրենսգրքի ոչ արդյունավետ կարգավորումների մեջ է, իսկ մյուս կողմից դրա կիրառության պրակտիկայի մեջ: Այս խնդրին ավելանում է նաև այն, որ գործնականում արդյունավետ չեն նաև բողոքարկումները::

ՀՀ դատախազության կողմից իրականացված հրապարակումների համաձայն՝ մշակվել է ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ նախատեսող նախագիծ, որոնք ուղղված են քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման դեմ ոտնձգող հանցատեսակների համար նախատեսված պատիժը՝ որպես հիմնական պատժատեսակ նախատեսելով բացառապես ազատազրկումը ընտրական հանցակազմերի ձևակերպումների հստակեցնումն է, ինչպես նաև պատիժների խստացումը: Դրանից բացի, նախագծի վերաբերյալ ՀՀ դատախազության հրապարակային պարզաբանումներից ենթադրվում է, որ այդ նախագծով նախատեսվող կարգավորումներով նպատակ է հետապնդվում քրեականացնել քաղաքացիների ընտրական իրավունքի իրացման դեմ ոտնձգող առանձին արարքներ, խստացնել պատիժները, ընտրական հանձնաժողովի նախագահի կամ անդամների կողմից կատարվող հանցագործությունների համար որպես պարտադիր լրացուցիչ պատիժ նախատեսել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկումը, հստակեցնել որոշ ընտրական

հանցագործությունների հանցակազմերը, սահմանել քննչական ենթակայության կանոններ ՀՀ քրեական օրենսգրքում լրացվող հոդվածներով²⁵:

Այդուհանդերձ, ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ առաջարկող նախագիծը դեռ հրապարակված չէ, թեև ըստ հրապարակային տվյալների՝ ուղարկվել է ՀՀ կառավարություն: Այդ իսկ պատճառով էլ հնարավոր չէ այս պահին լիարժեք գնահատական տալ նախագծի դրույթների վերաբերյալ:

Ամեն դեպքում, ակնհայտ է, որ ՀՀ քրեական օրենսդրությունն ունի փոփոխության կարիք: Մասնավորապես, պետք է համակարգային վերլուծության ենթարկել ընտրական գործընթացների հետ կապված հանցագործությունների քննության պրակտիկան և դրա արդյունքներով առաջարկել այնպիսի կարգավորումներ, որոնք իրապես կունենան կանխարգելիչ նշանակություն:

Պետք է նշված նպատակին ուղղված յուրաքանչյուր քայլ դարձնել հրապարակային քննարկման առարկա: Այս առումով, մտահոգիչ է, որ թեև հայտարարվել է ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ առաջարկող նախագծի մասին, սակայն քննարկումներ այդ առիթով դեռ չեն կազմակերպվել: Դրանով պայմանավորված՝ չեն իրականացվել իրազեկության բարձրացման աշխատանքներ: Իրազեկման ակտիվ աշխատանքները մեծապես նպաստում են հետագա ընտրախախտումների կանխարարգելմանը, ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացմանը:

²⁵ <https://www.youtube.com/watch?v=9N5y9vmicpY&feature=youtu.be>,

VII. Եզրահանգում

2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի գործընթացի վերաբերյալ տեղական իրավապաշտպան և միջազգային դիտորդական կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ուսումնասիրությունը վկայում է, որ արձանագրվել են քարոզչության խախտումներ, ընտրացուցակների անճշտություններ, ընտրատեղամասերի ոչ պատշաճ նախապատրաստման ու կահավորման և արդյունքում՝ քվեարկության գաղտնիության խախտման դեպքեր: Դրանից բացի, արձանագրվել են նաև լրագրողների և դիտորդների գործունեությունը խոչընդոտելու, նրանց նկատմամբ սպառնալիքների գործադրման դեպքեր:

Զանգվածային լրատվության միջոցներն ու լրագրողներն ունեն կարևորագույն դեր ժողովրդավարական հասարակությունում տեղեկատվության ազատության ապահովման հարցում: Լրատվության միջոցների ազատ ու հավասար գործունեությունն է այն երաշխիքը, որ մի կողմից հասարակությանը հնարավորություն է տալիս լիարժեք իրացնելու տեղեկատվության ազատության իրենց իրավունքը, իսկ մյուս կողմից պետական մարմիններին զերծ է պահում կամայականություններից ու խախտումներից: Լրատվամիջոցների դերն առանձնապես կարևոր ու զգայուն է պետական և հասարակական կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող այնպիսի իրադարձությունների համար, ինչպիսիք են ընտրությունները կամ հանրաքվեները:

Դիտորդների գործունեությունը կազմում է ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողություն ապահովող մեխանիզմի բաղկացուցիչ մասը: Դիտորդների գործունեության շնորհիվ է նաև, որ հնարավոր է լինում կանխել բազմաթիվ ընտրախախտումներ, ինչպես նաև ապահովել քվեարկության բնականոն ընթացք ընտրատեղամասերում:

Ուստի, մեր երկրում լրագրողների և դիտորդների գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դեպք պետք է դառնա անհապաղ քննության առարկա, իսկ

իրավախախտում կատարած անձինք պետք է ենթարկվեն պատասխանատվության, այդ թվում՝ քրեական՝ օրենքի ողջ խոստությամբ:

«Վարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արձանագրած խախտումների, ինչպես նաև ստացած ահազանգերի վերաբերյալ հաղորդումների կապակցությամբ իրականացված քրեական վարույթների արդյունքները վկայում են, որ դրանց հիմնական մասով նախապատրաստված նյութերի հիման վրա քրեական գործերի հարուցումը մերժվել է կամ հարուցված քրեական գործերով վարույթները կարճվել են: Հարուցված քրեական գործերի քննության արդյունքում էլ հանցանք կատարած անձինք դատապարտվել են տուգանք պատժատեսակի:

Ընտրական գործընթացին առնչվող հանցանքների քննության հետ կապված նշված իրավիճակը չի նպաստում նման իրավախախտումները լիարժեք կանխարգելելուն և, հետևաբար, չի կարող արդյունավետ լինել: Բանն այն է, որ այդ հանցավոր արարքներն իրենց բնույթով առավել վտանգավոր են, քանի որ ոտնձգում են քաղաքացիների ընտրական իրավունքների դեմ և որ ավելի հիմնարար է՝ երկրի մայր օրենքի ու պետական իշխանության մարմինների ձևավորման ժողովրդավարական հիմքերին:

Այսպիսի իրավիճակն ընդունելի չէ նաև ընտրական գործընթացների նկատմամբ հանրային դրական ընկալման և քաղաքացիների իրավունքների դեմ ոտնձգող արարքների դեմ պետության իրավասու մարմինների կողմից տարվող պայքարի նկատմամբ հանրային վստահության տեսանկյունից:

Այս առումով, ընդհանրապես ազատագրկումը համարելով բացառիկ միջոց՝ այդուհանդերձ ընդունելի չէ իրավակիրառ այն պրակտիկան, երբ քաղաքացու ընտրական իրավունքի իրականացման դեմ ոտնձգող անձինք միայն դատապարտվում են տուգանքի: Անհրաժեշտ է ոչ միայն փոփոխության ենթարկել այսպիսի պրակտիկան, այլ նաև «Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով առավել խստացնել քրեաիրավական պայքարը ընտրական իրավունքների իրացման դեմ ոտնձգող հանցավոր արարքների դեմ:

Պետք է բացառել նաև նման արարքների վերաբերյալ հաղորդումների կապակցությամբ քրեական գործերի հարուցումը մերժելու պրակտիկան: Սա արդյունավետ չէ այս ոլորտի հանցանքների կանխարգելման տեսանկյունից և, բացի այդ, հնարավորություն չի տալիս ապահովել տուժողների իրավական արդյունավետ պաշտպանություն: Նյութերի նախապատրաստման փուլն ինքնին օրենսդրական կարգավորումների ուժով թույլ չի տալիս քննչական բոլոր գործողությունների գործադրմամբ լիարժեք քննություն իրականացնել: Անհրաժեշտ է բոլոր դեպքերում հարուցել քրեական գործ և միայն բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ քննության արդյունքում լուծել հարուցված գործով վարույթի ընթացքը: